ԱԶԳ

# Ի՞նչ պետք է իմանա ընտրողը

### Ո՞վ ունի ընտրելու իրավունք

*Ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացի, 18 տարին լրացած այն անձինք, ովքեր ընտրությունների պահին արդեն ոչ պակաս, քան մեկ տարի բնակվում են Հայաստանում:*

### Ե՞րբ են տեղի ունենալու ընտրությունները

*Ընտրությունները տեղի կունենան 1995 թ. հուլիսի 5-ին: Ընտրական տեղամասերը բաց կլինեն ժամը 8:00-20:00:*

### Որտե՞ղ ընտրել

*Ձեր ընտրական տեղամասի գտնվելու վայրը հրապարակվել է պաշտոնական մամուլում: Երբ չկարողանաք գտնել Ձեր տեղամասը, դիմեք իշխանության մարմիններին:*

### Ի՞նչ տեղի կունենա ընտրական տեղամասում

1. Առաջին սեղանի մոտ Ձեզ կխնդրեն ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:
2. Ձեր անունը կգտնեն ցուցակներում, և Դուք պետք է Ձեր անվան դիմաց ստորագրեք:
3. Ձեզ կտրվի պատասխանատու անձի կողմից ստորագրված վկայական, որը Ձեզ իրավունք կտա մասնակցելու քվեարկությանը: Այդ վկայականի մեջ նույնպես Դուք պետք է ստորագրեք:
4. Երկրորդ սեղանի մոտ Դուք այդ վկայականը պետք է ներկայացնեք պատասխանատու անձին: Նա կստորագրի այն և կկտրի դրան կցված ստուգիչ կտրոնը: Այնուհետև ստուգիչ կտրոնը կգցվի հատուկ արկղի մեջ:
5. Այնուհետև Ձեզ կտրվի քվեաթերթիկ: Համոզվեք, որ նրա վրա կան պատասխանատու անձի ստորագրությունը և Ձեր ընտրատարածքի կնիքը: Եթե ստորագրությունը և կնիքը բացակայում են, խնդրեք աշխատողներին լրացնել այդ բացը, քանի որ առանց դրանց քվեաթերթիկը կհամարվի անվավեր:
6. Այս ամենից հետո Ձեզ կառաջարկեն մտնել հատուկ խցիկ, որտեղ Դուք պետք է ջնջեք բոլոր թեկնածուների անունները և կազմակերպությունների անվանումները, թողնելով միայն այն անունը կամ այն կազմակերպության (կուսակցության կամ բլոկի) անվանումը, ում դուք նախընտրել եք տալ Ձեր ձայնը: Խցիկում Դուք պետք է լինեք մենակ: Մինչև խցիկից դուրս գալը փակեք կամ ծալեք ձեր քվեաթերթիկն այնպես, որ Ձեր կատարած նշումները ուրիշները չտեսնեն: Ձեր քվեաթերթիկն անձամբ գցեք քվեատուփը:

### Ինչպե՞ս են անցկացվելու ընտրությունները

Ընտրելու իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացու կտրվի 3 քվեաթերթիկ:

Առաջին՝ Ձեզ կտրվեն այսպես կոչված «մեծամասնական» համակարգով ընտրվող թեկնածուների ցուցակ պարունակող քվեաթերթիկներ: Դրանցով Դուք պետք է ընտրեք Ազգային ժողովի ՄԵԿ պատգամավորի, որը կներկայացնի Ձեր ընտրատարածքը: Ընդամենը Հայաստանում կա 150 ընտրատարածք, այսինքն՝ այս ձևով պետք է ընտրվի 150 պատգամավոր:

Երկրորդ՝ Ձեզ կտրվի այսպես կոչված «համամասնական» համակարգով ընտրվող կուսակցությունների ցուցակ պարունակող քվեաթերթիկ: Այդ ցուցակում ընդգրկված են ընդամենը 13 կուսակցություն կամ նրանց միավորումները: Դուք պետք է ընտրեք Ձեր նախընտրած ՄԵԿ հասարակական քաղաքական կազմակերպություն կամ կուսակցություն:

«Համամասնական» համակարգով պետք է ընտրվի 40 պատգամավոր (Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թիվն է 190): Թե այդ 40-ից քանի՞ պատգամավորը կլինեն տվյալ կուսակցությունից, կախված է նրանից, թե որքան ձայն կստանա այդ կուսակցությունը ամբողջ հանրապետությունում: Ամեն կուսակցություն նախապես ներկայացրել է թեկնածուների իր ցուցակը: Այդ ցուցակների առաջին երեք անունները նշված են քվեաթերթիկում:

Երրորդ՝ Ձեզ կտրվի նաև հանրաքվեի թերթիկ, որով Դուք պիտի որոշեք ընդունվի՞ արդյոք հանրաքվեի դրված Սահմանադրության նախագիծը, թե ոչ: Եթե Դուք կողմ եք Սահմանադրությունն ընդունելուն, ապա այդ թերթիկի վրա պետք է ջնջեք «ՈՉ» բառը: Եթե դեմ եք Սահմանադրությանը, ապա պետք է ջնջեք «ԱՅՈ» բառը:




11. Հայաստանի ռամկավար-ազատական կուսակցություն — Միրզախանյան Ռուբեն Կարլենի, Պետրոսյան Ռաֆիկ Գարեգինի, Դովլաթյան Ֆրունզիկ Վաղինակի

*Թողնել միայն մեկ հասարակական-քաղաքական կազմակերպության կամ նրանց միավորման անվանումը, որին կողմ եք ու ջնջել մյուս հասարակական-քաղաքական կազմակերպությունների և նրանց միավորումների անվանումները:*

*Անվավեր են ճանաչվում մեկից ավելի հասարակական-քաղաքական կազմակերպություններին կամ նրանց միավորումներին տրված ձայներով, ինչպես նաև ավելորդ գրառումներով քվեաթերթիկները:*

### Ինչպե՞ս իմանալ՝ Դուք ընդգրկվա՞ծ եք ընտրողների ցուցակներում, թե՞ ոչ

Ձեր տեղամասային ընտրական հանձնաժողովը ունի այդ տարածքի ընտրողների ցուցակը: Հարկ է, որ Դուք գնաք տեղամաս և համոզվեք, որ Ձեր անունը կա այդ ցուցակում: Եթե Ձեր անունը բացակայում է կամ նրանում սխալ կա, հանձնաժողովի անդամները իրավունք ունեն ճշտելու: Դրա համար Դուք պետք է ներկայացնեք անձնագիր:

### Ի՞նչ պետք է վերցնել ընտրությունների օրը քվեարկության գնալիս

Ընտրական տեղամաս պետք է ներկայանալ անձնագրով: Եթե չունեք անձնագիր, կարող եք օգտվել ժամանակավոր անձնագրից, զինգրքույկից կամ անձը հաստատող որևէ այլ փաստաթղթից, որում նշված կլինեն Ձեր ծննդյան օրը, բնակության վայրը և կլինի լուսանկար: Առանց անձը հաստատող փաստաթղթի Դուք չեք կարողանա մասնակցել ընտրություններին:

## ԻՆՉՊԵ՞Ս ԼՐԱՑՆԵԼ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ

«Մեծամասնական» քվեաթերթիկում նշված ցուցակից Դուք պետք է ջնջեք այն թեկնածուների անունները, որոնց մերժում եք, և թողնեք նրա անունը (միայն մեկ անուն), ում նախընտրում եք: Եթե ցուցակում մի թեկնածու է, և Դուք համաձայն եք նրա թեկնածությանը, ապա քվեաթերթիկում ջնջեք «համաձայն չեմ» բառերը: Եթե համաձայն չեք այդ թեկնածությանը, ապա ջնջեք «Համաձայն եմ» բառերը:

«Համամասնական» քվեաթերթիկում Դուք պետք է ջնջեք այն հասարակական-քաղաքական կազմակերպությունների և բլոկների անունները, որոնց Դուք մերժում եք և թողնեք միայն Ձեր նախընտրած ՄԵԿ կուսակցության կամ բլոկի անունը:

Քվեաթերթիկում Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության թիվն է 11-ը:

Հանրաքվեի քվեաթերթիկն առաջարկում է ընտրություն. համաձա՞յն եք, թե՞ ոչ առաջարկված Սահմանադրության նախագծին: Եթե դուք համաձայն եք, պետք է ջնջեք «ՈՉ» բառը, հակառակ դեպքում պետք է ջնջեք «ԱՅՈ» բառը:

**Հիշեցնե՛նք**

Ազգանունների, կազմակերպությունների կամ բլոկների ընդգծման դեպքում հետևեք քվեաթերթիկում նշված ցուցումներին, այլապես Ձեր քվեաթերթիկը կհամարվի անվավեր: Օրենքի համաձայն, քվեաթերթիկը անօրինական է համարվում, երբ

- այն չի համապատասխանում հաստատված օրինակին
- նրանում բացակայում է ընտրատարածքի պաշտոնական կնիքը
- ոչ մի տարբերակն էլ ջնջված չէ
- կան ավելորդ նշումներ կամ ձեռքով գրված անուններ:

digitised by A.R.A.R.@

